Աշխատանքի որոնման և վերապատրաստման ծառայություններ

Նահանգային և տեղական կազմակերպությունները համագործակցում են՝ առաջարկելու զբաղվածության և աշխատանքի վերապատրաստման անվճար ծառայություններ՝ America's Job Center of California℠ (AJCC) կենտրոնների միջոցով:

AJCC-ի կարիերայի խորհրդատուներն օգնում են աշխատանք փնտրողներին հայտնաբերել հետաքրքրություններ, գնահատել հմտություններ և գտնել պահանջարկ ունեցող աշխատանքներ և վերապատրաստում:

AJCC ծառայություններ.

- Հասանելիություն կրթության և աշխատանքի վերապատրաստման հնարավորություններին, որոնք նոր կարիերայի համար ճանապարհ են բացում:
- Օգնություն աշխատանքի որոնման և ռեզյումեի հարցերում, աշխատանքի ուղեգիր, օգնություն տեղավորման հարցում և կարիերայի վերաբերյալ խորհրդատվություն:
- Զբաղվածության հետ կապված աշխատաժողովներ և աշխատանքի վիրտուալ շուկաներ:
- Կարիերայի ուսումնասիրման գործիքներ և աշխատաշուկայի մասին տեղեկություններ:
- Ռեսուրսային սենյակներ, որոնք ներառում են համակարգիչներ՝ միացված համացանցին, հեռախոսներ և ֆաքսի սարքեր:
- Հասանելիություն CalJOBS℠ (CalJOBS.ca.gov), Կալիֆորնիայի առցանց աշխատանքային ռեսուրսին՝ ավելի քան մեկ միլիոն աշխատանքի հայտարարություններով՝ ավելի քան 30,000 գործատուի կողմից:
- Ուղղորդումներ աջակցող ծառայություններին, ներառյալ երեխաների խնամքը, կոմունալ ծառայությունների, բնակարանային և տրանսպորտի ծախսերի հարցում օգնությունը:

Ինչպես գտնել Ձեր տեղական AJCC-ն:

- Այցելեք CareerOneStop's American Job Center Finder (careeronestop.org/LocalHelp/service-locator.aspx):
- Ձեր մոտակա AJCC-ն գտնելու համար մուտքագրեք Ձեր քաղաքը, նահանգը կամ փոստային կոդը:

Խորհուրդ է տրվում ժամադրություններ նշանակել, քանզի առանց ժամադրությունների ծառայությունները սահմանափակ են:

AJCC-ների մեծ մասում առաջարկվում են վիրտուալ, հեռախոսային կամ անձամբ տրամադրվող ծառայություններ: Ծառայությունները և ժամերը կարող են տարբերվել և փոփոխվել: Նախքան այցելելը խնդրում ենք զանգահարել կամ էլ. նամակ ուղարկել Ձեր տեղական AJCC՝ ժամերն ու հասանելիությունը հաստատելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. AJCC-ներից մեծ մասում կարող եք ստանալ ընդհանուր օգնություն գործազրկության ապահովագրության (UI) նպաստներին դիմելու համար: AJCC-ներում մատչելի չէ օգնությունը՝ լուծելու գործազրկության *գոյություն ունեցող* հայցերը:

Ձեր UI հայցի կարգավիճակին հատուկ օգնության համար մուտք գործեք UI Online℠ կամ զանգահարեք 800-300-5616 հեռախոսահամարով: